

ԿՐՕՆԸ ԿՐՆ—ՔՐԻՈՅՆԿՐՆ

ՔՐԻՍՏՈՍԻ ԽԱՉԷ

(А. Лукинский. Россія № 1479.)

Նիկողիմոսի պարականոն աւետարանում, ուր մանրա-
մասնաբար նկարագրուած է Քրիստոսի անդունդ իջնելը,
դժոխքը սատանային այսպիսի յանդիմանութիւն է անու-
ած. «Տես, ինչ մօտ էլ ոչ մի մեռեալ չմնաց. ինչ որ ձեռք
էիր բերել դիտութեան ծառով, ամենն էլ կորցրի խաչի
փայտով: Մտածելով սպանել փառաց Թագաւորին՝ ինքդ
քեզ սպանեցիր»: Այս պարականոն հատուածը, ներկայ
հանգամանքում քրիստոնէական հաւատալիքի ամենալաւ
արտայայտիչն է: Քրիստոսի խաչով ջնջուեց մարդկանց
վերայից խաւարի իշխանութիւնը: Յարուցեալ Քրիստոսի
հետ մարդն էլ հոգւով յարութիւն առաւ: Ժողովուրդը
միշտ էլ և ամեն տեղ էլ, ուր քարոզուել է Քրիստոսի
անունը, հաւատացել է, որ ինքն, խաչի նշանը, է ահար-
կու հալածիչը ամեն տեսակ չար ոգու:

Ժողովուրդը ամեն տեղ էլ ժողովուրդ կը մնայ, բայց
մեր համար պարզ է, որ խաչի իշխանութիւնը մոգական
զօրութեան կամ հրաշքներ գործելու մէջ չէ, այլ քրիս-
տոնեայի սրտի և կամքի վերայ խօրին, երբեմն խորհրդա-
ւոր, անիմանալի ներքին ազդեցութեան մէջ է: Մտա-
բերելով խաչը, մարդս առանձին իմն զօրութեամբ իրա-
նից հեռացնում է այն ամենը, ինչ որ Փրկչին հակառակ
կը լինէր: Այս խորհրդաւոր ներգործութեան համար գե-
ղեցիկ կերպով խօսում է Պողոս առաքեալի «Ճառ Խաչին»:

Նրա խօսքով առանձին իմն զօրութիւն ունի հաւա-
տացեալի մտքով և զգացմամբ սերտ, ներքին միու-
թիւնը Քրիստոսի խաչով կատարած վրկադործութեան
հետ: Մտքի և սրտի հաղորդակցութեամբ միանալով Քրիս-

տոսի հետ նրա խաչի տանջանքի միջոցով, մարդս իւր հոգու մէջ սպանում է մեղքի սկզբունքը, խաչում է իւր մեղսամած մարմինը, և յարութիւն է առնում Քրիստոսի հետ, նոր առոյգ հոգով և նոր, ոգևորուած մարմնով: Քրիստոնեան չի կարող անուանապէս դատել այս մասին, դրա համար հարկաւոր է անցկացնել հոգևորապէս զուարթացնող ներքին վերածնութեան փոթորիկը: Թէ այս այսպէս է իսկապէս հաւատացողի համար, այդ մասին խօսում է պատմութիւնը:

«Իսկ մեր մէջ կը հանդիպէք, գրում էին առաջին դարի քրիստոնեաները տգէտների, ծերերի, կանանց, բանւորների, որոնք չկարողանալով խօսքով ազացուցանել քրիստոնէական վարդապետութեան փրկարար ազդեցութիւնը, գործով են ապացուցանում այն: Ամեն օր, գրում է Տերտուղիանոսը, դուք հարկադրուած էք նստել դատարանում և դատավճիռներ կարդալ ամեն տեսակ յանցապարտների մարդասպանների, խաբէբանների, տաճարներ կողոպտողների վերայ: Բայց դրանցից ո՞րն է քրիստոնեաներին պատկանում: Դրանց մէջ մի հատ քրիստոնեայ էլ չկայ»:

Սակայն, բացի գաղտնի, ինչպէս այժմ հոգեբաններն են ասում, «ենթգիտակցական» քամիներից, որոնցով համակուած են մարդու հոգևոր կեանքի և ձգտումների փոփոխութիւնները, ի հարկ է, ահագին նշանակութիւն ունի և գիտակցական հետեւողութիւնը խաչի մեծագործութեան, որը բարոյական օրինակի ուժն է: «Քրիստոս մեր համար չարչարուեց, գրում է Պետրոս առաքեալը, տալով մեղ օբինակ, որ մենք նրա հետքով գնանք»: Ով կամենում է գալ իմ ետեւից, ասում է ինքն Փրկիչը, թող ուրանայ իւր անձը և առնի իւր խաչն ու գայ իմ ետեւից»: Եւ այս ասուել է, ինչպէս ասում է վկայ աւետարանիչը (Ղուկ. Թ. 23), «ամենքին», և ոչ միայն այն մերձաւորներին, որոնք թողել էին ամեն ինչ առաքելական մեծ գործի համար:

Հարկ է ասել, որ Քրիստոսի այս խօսքերը շատ թու-

լահոգիների համար դայթակղութեան քար դարձան։ Խնդիրն այն է, որ այդ խաչը, որ Փրկիչը այնքան տիրաբար հրամայում է իւր հետեւողներին վեր առնել, և թէ այդ անձնազոհութիւնը, որի մասին խօսում է Նա, տանջում էր շատերին։ Ոմանք կարծում էին, թէ այդ անձնուիրութիւնը պէտք է տարածուի այն ամենի վերայ, ինչ որ երկրի վերայ քաղցր է մեր համար, ինչ որ հրապուրում է մեր աչքն, ինչ որ քաղցրալուր է մեր ականջին, ինչ որ ուրախացնում է մարդուն այս կեանքի զուարճութեամբ։ Եւ ոհա, փախչելով անապատ այս մարդիկը, ապրում էին այրող աւազների մէջ, Եգիպտոսի, Ասորիքի զարհուրելի անձաւներում, զրկելով իրանց ամեն բանից, ինչ որ կարող էր մեղկացնել մարմինը։ Բռնի մեռցնում էին իրանց բնական բռնկումները։ Այս անապատներում նրանք հաւատի այնպիսի ջահեր էին կանգնեցնում, որոնք ամբողջ աշխարհին լոյս էին ճառագայթում, հրապուրելով դէպի անապատականների անձաւները, որպէս դէպի մարտիրոսների գերեզմանները, բոլոր հաւատացեալների երկիւղած հիացման և երկրպագութեան զգացմունքը։

Իւր գոյութեան առաջին դարում քրիստոնէութիւնը, իւր մէջ «նոր կեանք» զգալով, իսկ իւր շուրջը խաւար և մոլութիւններ, վախենալով աշխարհի ունայնութեան մէջ կորցնել իւր դանձը, աշխատում էր խուսափել աշխարհից։ Բայց տօնական փառաւոր խնջոյքի այն ժամանակը, երբ առաքեալների և նրանց ժամանակակիցների մէջ անցաւոր երկրի վերայ շրջում էր ինքն Փրկիչը, և այնքան մօտիկ էր Նրա թողնելը աշխարհս, այնպիսի զգալի տխրութեամբ և վշտով էր համակում հաւատացեալի հոգին, որ բոլորն էլ կարծում էին, թէ առանց Տիրոջ երկար չեն դիմանայ, «ամեն բանի վախճանը մօտ է», մօտ է Նրա երկրորդ գալուստը։

Այս տրամադրութեամբ առաջին քրիստոնեաները միայն այն էին հոգում Քրիստոսի գալստեան օրը իրանց գերծ պահած լինեն աշխարհի չարից և ազատեն Նրա իշխանութիւնից որքան կարելի է շատ հոգիներ։ Այս դէպ

բում՝ աշխարհի իշխանութիւնն համարում էին այն, ինչ որ հեռացնում է Աստուծոց, բայց ոչ աշխարհային բոլոր վայելքները: «Սրբոց ամենայն ինչ սուրբ է», կրկնում էին առաջին քրիստոնեաները առաքելոյ խօսքերը և միայն այն էին հոգում, որ հոգով դէպի Աստուած ձգտեն, օրտի հեղութեամբ և խոնարհութեամբ իրանց անձը եղբօր համար զոհեն և ոչ ոքի չարիք չհասցնեն:

Այս սպասողական դրութեամբ անցաւ ամբողջ մի դար. հաւատացեալների գիտակցութեան համար պարզ եղաւ, որ քրիստոնէութեան վիճակուած է գուցէ դեռ երկար տարիներ գոյութիւն ունենալ այս, Քրիստոսի երկրորդ գալստեամբ դեռ չվերանորոգուած, աշխարհում: Եւ այն «խաչը», որ Տէրը աւանդեց քրիստոնէին կրել, ներկայանում էր մի քիչ այլ կերպարանքով, չյարիւր բոլորովին աշխարհին, այլ թափանցել նրա խաւար խորքերը կրելով Քրիստոսի պատկերը. պէտք է քրիստոնեան շրջի որ լուսաւորի աւետարանի լուսով նրա բոլոր անկիւնները, որ բոլորին բերի խաչի պատուանդանի մօտ և հարկադրի անձնատուր լինել սիրոյ մեծ գործին և ուրիշների բարւոյն ծառայելուն:

Եւ քրիստոնէութիւնը ընթանում էր այս ճանապարհով, որ հեթանոսական քաղաքակրթութեան տեղ ստեղծի քրիստոնէական պետութիւն, բարձրացնի կնոջը, մանուկներին մարդկային իրաւունք տայ, ջնջի ստրկութիւնը, սփռի սրտերում քրիստոնէական եղբայրութեան բարձր գաղափարը: Բայց ճանապարհը դեռ հեռի է. և դեռ շուտ չի լինի այն ժամանակը, երբ երկրի վերայ, աւետարանական բանին համեմատ, կը լինի մի հօտ և մի հովիւ-Քրիստոս:

Քրիստոս իւր հետեւողներին տուեց, ըստ երևութին, շատերի համար անձնուրացութեան խիստ պատուէրը, իսկ երանելին Օգոստինոս, ի նկատի ունենալով Քրիստոսի նոյն պատուէրը, ասում է քրիստոնէին. «Սիրիր և արա՛, ինչ որ կամենում ես քեզ անեն»: Եւ այս բոլորը չի հակասում անձնուրացութեան առաջին բարձր պատուիրանին: Չէ որ

Պօղոս առաքեալն էլ կոչ է անում ոչ թէ դէպի օրէնքի ստրկութիւն, սրան մի կպչիր, այս մի՛ անի, այլ դէպի քրիստոնէական ազատութիւնը:

Ոչ թէ սահմանափակելու համար անմեղ ուրախութիւններն ու մաքուր հաճոյքները, որոնք այնպէս քիչ բաժին են ընկել մարդուն այս դառն կեանքում, գրեց Քրիստոս իւր խաչը հաւատացեալի ուսի վերայ, այլ որ պահպանի նրանց հաւատացեալների ժամանակաւոր հիւանդոտ ինքնասիրութիւնից, և բաց անի նրա համար սիրոյ ծառայութեան համար նոր աւելի բարձր զուարճութիւններ: Քրիստոս պահանջում է զոհ, բայց այնպիսի զոհ, որը կատարելուց յետոյ սիրտը լցւում է բարձր զգացումով և ուրախութեամբ և կեանքը ստանում է բարձր և բերկրալից խորհուրդ, իսկ մեղքն ու արատիքը կորցնում են հոգու վերայ իշխանութիւնը: Սրանով Քրիստոսի խաչը դառնում է քաղցր և բեռն՝ թեթեւ այն բոլորի համար, որոնք ծանրաբեռնուած են աշխարհային ունայնութեան ծանր բեռնով:

Թարգ. Յ. Ա. Ե.

ԱՄԵՆԱԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՁ ԿԵԱՆՔՈՒՄ

(Շաբաթակուրիւն.)

ՆԵՐՇԵՆՃԱՆՈՒ ՈՅԺՐ:

Եթէ հոգւոյ մէջ դէպքերը տպաւորւում, նրան կերպարանաւորուում են, իրքան ևս առաւել մարդուն են կերպարանաւորուում: Փողոցում ոչ ոք չի կարող միւսին սլատահել, առանց նրա վերայ մի տպաւորութիւն թողնելու: Մենք խօսում ենք, մենք միմեանց հետ մի երկու խօսք ենք փոխարինում, և ինչ որ փոխարինում ենք—մեր հոգին է: Եւ որտեղ մի երկու անձնաւորութեան մէջ մի շատ ներքին և յաճախ յարաբերութիւն է տեղի ունենում, այս փոխարինութիւնը այնքան կատարեալ է, որ մի հոգւոյ բնաւորութեան յատկանիշերը կամաց—կամաց անցնում են